

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Մանկավարժություն և հոգեբանություն
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ _Լ.Գ.Բաղդասարյան_ /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № _10_

«_27_» _նոյեմբեր_ 2023_ թ.

ՄՀ/բ-195- ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՇՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԴԱՍԸՆԹԱՅԻ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ 011301.00.6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011301.03.6 - Սոցիալական մանկավարժություն

Որակավորման աստիճան՝ մանկավարժության բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ ՄԱՆԿԱՎԱՐՇՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ուսուցման ձևը՝ _ հեռակա _____

/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ հեռակա – 3-րդ կուրս, 5 -րդ կիսամյակ

Դասախոս՝ մ.գ.թ. Լ. Մարուքյան

Էլ. հասցե/ներ_lusine.marukyan@mail.ru

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում	3
2.	Դասընթացի նպատակը և խնդիրները	3
3.	Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները	4
4.	Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5.	Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6.	Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7.	Ուսումնական աշխատանքները տեսակները
8.	Դասավանդման մեթոդներ.....	...
9.	Ուսումնառության մեթոդները
10.	Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11.	Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ.....	...
12.	Դասընթացի ուսումնամեթոդական քարտ.....	...
	12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
	12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ.....	...
	12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ.....	...
	12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13.	Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում.....	...
14.	Գնահատում.....	...
	14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում.....	...
	14.2. Հարցաշար.....	...
	14.3. Գնահատման չափանիշներ.....	...
15.	Դասընթացի համառոտ նկարագրիչ.....	...

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում¹.

«ՄՀ/բ-195-Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն» դասընթացը կարևորվում է բարձրագույն մասնագիտական կրթության «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է 011301.03.6 /051300.61/ կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում:

«Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն» դասընթացն իր ուրույն տեղն է զբաղեցնում սոցիալ-մանկավարժական դասընթացների շարքում և նպաստում է մասնագետի լիարժեք կայացման գործին՝ զինելով նրան գործնական հմտություններով ու կարողություններով:

Սոցիալական մանկավարժության խորհրդատվության գործունեությունը մասնագիտական գործունեության տարատեսակ է, որն ուղղված է սոցիալականացման գործընթացում գտնվող անձին օգնելուն, ինչպես նաև պայմաններ է ստեղծում հասարակության մեջ ինքնահաստատվելու:

«Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն»-ն այնպիսի սոցիալ-մանկավարժական գործունեություն է, որը հասցեագրված է սոցիալական հասարակության մեջ ինտեգրվելու գործընթացում անձի խնդիրները լուծելուն:

Սույն դասընթացը հնարավորություն է տալիս ուսանողին ավելի հստակ պատկերացնել իր մասնագիտության առանձնահատկությունները, առավել մանրակրկիտ ուսումնասիրել սոցիալական մանկավարժի գործունեության ոլորտները և դրանցում հանդիպող դժվարությունները:

«Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն» դասընթացն ավելի է հստակեցնում սոցիալական մանկավարժ մասնագետի դերը՝ ցույց տալով գործունեության սահմանները և անհրաժեշտությունը կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:

Դասընթացի յուրացումը պահանջում է մանկավարժական և հոգեբանական առարկաների խոր իմացություն՝ կարևորելով տարիքային մանկավարժության, հոգեբանության դերը:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի ուսումնասիրման նպատակն է

- ուսանողներին զինել սոցիալականացման գործընթացում դժվարությունների հանդիպող անձանց /հատկապես երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին/ օգնելու գործնական խորհրդատվական մեթոդներով և զանազան հնարներով:
- «Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն» դասընթացի նպատակն է նաև
- զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:
- չափանիշների հետազոտության շրջանակներում հմտությունների և կարողությունների ձևավորում ուսանողների մոտ:
- համեմատության և վերլուծելու ունակությունների ձեռքբերում ուսանողների կողմից:
- վերլուծելու կարողությունների ձևավորում տարբեր իրավիճակներում:

¹ Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

2.2. Դասընթացի խնդիրներն են.

- Սովորեցնել «Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն» դասընթացի տեսական հիմքերը:
- Բացատրել «Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն» դասընթացի օրինաչափությունները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Սովորեցնել ուսանողներին կատարել «Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն» դասընթացի հետազոտություններ և կատարել եզրահանգումներ ըստ արդյունքների:
- Սովորեցնել ուսանողներին վերլուծել «Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն» դասընթացի առանձնահատկությունները սոցիալականացման համատեքստում:

Դասընթացի ուսումնասիրման խնդիրներն են նաև.

1. ներկայացնել սոցիալ-մանկավարժական գործունեության ոլորտներն ու դրանցում իրականացվող խորհրդատվության առանձնահատկությունները,
2. ուսանողներին ծանոթացնել սոցիալիալական մանկավարժության խորհրդատվության մեթոդներին, ինչպես նաև դրանց իրագործման եղանակներին,
3. ներկայացնել սոցիալական ինստիտուտների համագործակցության ձևերն ու սոցիալական մանկավարժի դերը դրանում,
4. ուսումնասիրել տարբեր բնույթի սոցիալական խնդիր ունեցող անհատների խմբի հետ աշխատելու մեթոդիկան:

Առարկայի յուրացման աստիճանին ներկայացվող պահանջները.

1. Ուսանողը տիրապետի սոցիալական մանկավարժության խորհրդատվության մեթոդներին և եղանակներին, դրանց իրագործման առանձնահատկություններին:
2. Հանգամանորեն իմանա տարիքային փուլերի առանձնահատկությունները, որոնք անչափ կարևոր են սոցիալական մանկավարժության խորհրդատվության համար:
3. Կարողանա ճիշտ դասակարգել խորհրդառուի խնդիրները, ճիշտ ընտրի այն մեթոդները, որով պետք է լուծի խնդիրը, իրականացնի արդյունավետ խորհրդակցություն:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

- ընդհանուր հումանիտար և սոցիալ- տնտեսագիտական,
- մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական,
- ընդհանուր մասնագիտական,
- հատուկ մասնագիտական,

«Սոցիալական մանկավարժության խորհրդատվության» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների սոցիալ-մանկավարժական գիտելիքների, սոցիալ-մանկավարժական հմտությունների առկայությունը:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)² և /կամ կոմպետենցիաները.

² <http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf>

«Սոցիալական մանկավարժության խորհրդատվության» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

4. Դասընթացի յուրացման պահանջների մակարդակը՝ որպես ուսումնասիրման արդյունք

4.1. Դասընթացի ուսուցման գործընթացը ուղղված է հետևյալ ընդհանրական գործիքային կոմպետենցիաների (այսուհետ ԳԿ) ձևավորմանը:

- վերլուծելու և սինթեզելու ունակություն,
- կազմակերպելու և պլանավորելու ունակություն,
- հենքային և ընդհանուր գիտելիքներ,
- մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
- տեղեկատվությունը կառավարելու ունակություն,
- մանկավարժական խնդիրների լուծում,
- որոշումների ընդունում:

4.2. Դասընթացի ուսուցման գործընթացը ուղղված է հետևյալ ընդհանրական միջանձնային կոմպետենցիաների (այսուհետ ՄՁԿ) ձևավորմանը:

- քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,
- թիմային աշխատանք,
- միջանձնային ունակություններ,
- միջառարկայական թիմում աշխատելու ունակություն,
- այլ ոլորտների փորձագետների հետ շփվելու ունակություն,
- բազմաձևության և բազմամշակութայնության ընդունում,
- միջազգային միջավայրում աշխատելու ունակություն,
- բարոյական արժեքներ:

4.3. Դասընթացի ուսուցման գործընթացը ուղղված է հետևյալ ընդհանրական համակարգային կոմպետենցիաների (այսուհետ ՀԳԿ) ձևավորմանը:

- գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
- հետազոտություններ կատարելու ունակություններ,
- սովորելու ունակություն,
- նոր իրավիճակներին հարմարվելու ունակություն,
- նոր գաղափարներ առաջ քաշելու (ստեղծագործելու) ունակություն,
- առաջնորդի հատկություններ,

- ինքնուրույն աշխատելու ունակություն,
- նախագծեր մշակելու և դրանք կառավարելու ունակություն,
- նախաձեռնողականություն և ձեռներեցություն,
- որակի կարևորության գիտակցում,
- հաջողության ձգտում:

4.4. Դասընթացի ուսուցման գործընթացը ուղղված է հետևյալ առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաների (այսուհետ՝ ԱԿ) ձևավորմանը:

- դրսևորել մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն,
- հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
- համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,
- ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
- դրսևորել ժամանակակից խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում,
- քննադատորեն գնահատել և մեկնաբանել տեսության ու պրակտիկայի նորագույն ձեռքբերումները,
- տիրապետել ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանալ մեկնաբանել հետազոտության արդյունքները,
- ունակ լինել ուրույն, թեկուզ և փոքր ներդրում կատարելու տվյալ առարկայական ոլորտում,
- ցուցաբերել ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս,
- տիրապետել տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

Դասընթացի ընթացքում կիրականանա ծրագրի ավարտական պահանջներով նախատեսված հետևյալ ուսուցչական կոմպետենցիաների զարգացումը.

- հանձնառություն սովորողների առաջադիմության և ձեռքբերումների նկատմամբ (Ու1),
- ուսուցման ժամանակակից մեթոդները և տեխնոլոգիաները ուսումնասիրելու, ներդնելու կարողություն (Ու2),
- առարկայական գիտելիքներին տիրապետելու կարողություն (Ու4),
- ուսուցման բարենպաստ միջավայր ստեղծելու կարողություն (Ու5),
- ժամանակը արդյունավետ օգտագործելու հմտություն (Ու6),
- սեփական գործունեության արդյունքները գնահատելու և վերլուծելու կարողություն (Ու7),

- մասնագիտական կատարելագործման անհրաժեշտության գիտակցում (ՈւՑ):

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Ա)Շնորհանրական կոմպետենցիաներ

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝

- ԳԿ1** վերլուծելու և սինթեզելու ունակություն,
- ԳԿ4** մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
- ԳԿ9** խնդիրների լուծում,
- ԳԿ10** որոշումների ընդունում:

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

- ՀԳԿ1** գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
- ՀԳԿ2** հետազոտություններ կատարելու ունակություններ,
- ՀԳԿ3** սովորելու ունակություն,
- ՀԳԿ8** ինքնուրույն աշխատելու ունակություն,

Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

- ԱԿ2** հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
- ԱԿ4** ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
- ԱԿ6** կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
- ԱԿ11** տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
- ԱԿ14** տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների³.

«Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում, նաև, մագիստրատուրայում, ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	4 կրեդիտ/120 ժամ	4 կրեդիտ/120 ժամ
Աշխատանքի տեսակը	ժամաքանակ	ժամաքանակ

³ Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

Դասախոսություն		8
Գործնական աշխատանք		6
Մեմինար պարապմունք		-
Լաբորատոր աշխատանք		-
Ինքնուրույն աշխատանք		106
Ընդամենը		120
Ստուգման ձևը (ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)		

7. Ուսումնական աշխատանքների տեսակները⁴.

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **Մեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Մեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

⁴ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

Մեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակության հարցադրումների և պատասխանների մասին:

- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդալրգիան:

Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են⁵

- **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրվող, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
- **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- **Կունկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
- **Նախագծերի մեթոդ** – ուսումնաձանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
- **Հարցի նախապատրաստման մոդել** – կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգաթղթի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգաթղթից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:

⁵ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **Աշխատանքային տեսոր** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- **Չեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներն են**⁶ հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր....

9. **Ուսումնառության մեթոդներն են**⁷ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

Սոցիալական մանկավարժության խորհրդատվության էությունը: Սոցիալ-մանկավարժական խորհրդատվություն ընտանիքին: Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն զբաղվածություն ոլորտում: Մանկության սոցիալական պաշտպանություն: Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն հաշմանդամների հետ: Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն ծերերի հետ: Սոցիալական դաստիարակություն:

Սոցիալական մանկավարժի իմիջը խորհրդատվական աշխատանքներ իրականացնելիս: «Իմիջ» հասկացության էությունը: Սոցիալական մանկավարժի իմիջը: Սկզբական շրջանի խորհրդատվության փուլերը: Խորհրդատվության առանձնահատկություններն ըստ տարիքային փուլերի:

Հարցազրույցի մեթոդի կիրառումը սոցիալ-խորհրդատվական գործունեության ժամանակ: Հարցազրույցը որպես իրավիճակի վերլուծության մեթոդ: Հարցազրույցի քայլերը: Խորհրդատուի ներգործության մեթոդները հարցազրույցի ընթացքում:

⁶ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
⁷ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

Սոցիալական մանկավարժության խորհրդատվության դերը մանկության շրջանում:
«Մանկության» բնութագիրը: Մանկության շրջանում անձի սոցիալականացմանն ուղղված աշխատանքները: Մանկության շրջանում ծնողների հետ տարվող խորհրդատվական աշխատանքները:

Երեխաների սոցիալական պաշտպանվածությունն ու ապահովվածությունը: Մանկական սոցիալական պաշտպանության ժամանակ սոցիալական մանկավարժի գործառույթները: Ծնողագուրկ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շահերի և իրավունքների պաշտպանություն: Մանկական սոցիալական պաշտպանվածության հիմնական նպատակները: Մանկական սոցիալական պաշտպանվածությունն իրագործելու ռազմավարությունը:

Սոցիալական մանկավարժի խորհրդատվական աշխատանքը դժվար դեռահասների հետ:
«Դժվար» դեռահասը, նրա հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները:
«Դժվար» դեռահասի ծնողների հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները:
Սոցիալական շեղումները, կանխարգելման սոցիալ-խորհրդատվական աշխատանքները:

Սոցիալական մանկավարժի խորհրդատվական աշխատանքն օժիված երեխաների հետ:
Օժտված երեխան, նրա հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները:
Տաղանդավոր և բացառիկ ընդունակություններով երեխաների տարբերակումը որպես խորհրդատվական աշխատանքի սկզբնական փուլ: Օժտված երեխայի ծնողների հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները:

Սոցիալ-խորհրդատվական աշխատանքն աուտիկ երեխաների հետ: Աուտիկ երեխայի խոսքի ձևավորման առանձնահատկությունները: Աուտիկ երեխայի սոցիալական դժվարությունները և շփման առանձնահատկությունները: Աուտիկ երեխայի բնավորության և վարքի առանձնահատկությունները: Աուտիկ երեխայի հետաքրքրությունների առանձնահատկությունները և զգացողությունների /սենսորիկայի/ զարգացման առանձնահատկությունները: Աուտիզմով տառապող երեխաների կրթության կազակերպումը: Կառուցվածքային ուսուցումը որպես աուտիկ երեխաների ուսուցման ձև:

Սոցիալական մանկավարժության խորհրդատվության իրականացումն ընտանիքում:
Ընտանիքի տիպերը: Հիվանդ երեխա ունեցող ընտանիքի հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները: Անչափահաս երեխա ունեցող ընտանիքի հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները: Հարբեցող ընտանքի հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները: Սոցիալական օգնության խառը տիպի կենտրոնները:

10. Դասընթացի բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ մոդուլների,
բաժինների և թեմաների

Կիսամյակ 3-րդ

Թիվ	Թեմա (մոդուլ 1)	բովանդակություն	ուսումնական աշխատանքի ծավալը և տեսակները				ինքնուրույն	անհատական	Թեմայի, բաժնի յուրացման որակի գնահատման ձևը
			դաս.	սեմ.	գործ.	լաբ.			
1.	Սոցիալական մանկավարժության խորհրդատվության էությունը:	Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն ընտանիքին: Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն զբաղվածություն ոլորտում: Մանկության սոցիալական պաշտպանություն: Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն հաշմանդամների հետ: Սոցիալական մանկավարժության խորհրդատվություն ծերերի հետ: Սոցիալական դաստիարակություն:	2 [1]		2		5		խաչաձև հարցույթատասխանի, «Ֆայթ» հարցադրումների, դեբատի, գաղափարագրման, կոլեկտիվի գնահատման, ինքնագնահատման միջոցով
2.	Սոցիալական մանկավարժի իմիջը խորհրդատվական աշխատանքներ իրականացնելիս:	«Իմիջ» հասկացության էությունը: Սոցիալական մանկավարժի իմիջը: Սկզբական շրջանի խորհրդատվության փուլերը: Խորհրդատվության առանձնահատկություններն ըստ տարիքային փուլերի:	2 [1]		2		7		կոլեկտիվ համագործակցային տեխնոլոգիա
3.	Հարցազրույցի մեթոդի կիրառումը սոցիալ-խորհրդատվական գործունեության ժամանակ:	Հարցազրույցը որպես իրավիճակի վերլուծության մեթոդ: Հարցազրույցի քայլերը: Խորհրդատուի ներգործության մեթոդները հարցազրույցի ընթացքում:	4 [2]		4 [2]		5		խաչաձև հարցույթատասխանի, «Ֆայթ» հարցադրումների, դեբատի, գաղափարագրման, կոլեկտիվի գնահատման, ինքնագնահատման միջոցով

4.	Սոցիալական մանկավարժության խորհրդատվության դերը մանկության շրջանում:	«Մանկության» բնութագիրը: Մանկության շրջանում անձի սոցիալականացմանն ուղղված աշխատանքները: Մանկության շրջանում ծնողների հետ տարվող խորհրդատվական աշխատանքները:	2		4		5	զարգացնող ուսուցման տեխնոլոգիա
5.	Երեխաների սոցիալական պաշտպանվածությունն ու ապահովվածությունը:	Մանկական սոցիալական պաշտպանության ժամանակ սոցիալական մանկավարժի գործառույթները: Ծնողագուրկ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շահերի և իրավունքների պաշտպանություն: Մանկական սոցիալական պաշտպանվածության հիմնական նպատակները: Մանկական սոցիալական պաշտպանվածությունն իրագործելու ռազմավարությունը:	2		4		5	խաչաձև հարցույթատասխանի, «Ֆապթ» հարցադրումների, դեբատի, գաղափարագրման, կոլեկտիվի գնահատման, ինքնագնահատման միջոցով
6.	Սոցիալական մանկավարժի խորհրդատվական աշխատանքը դժվար դեռահասների հետ:	«Դժվար» դեռահասը, նրա հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները: «Դժվար» դեռահասի ծնողների հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները: Սոցիալական շեղումները, կանխարգելման սոցիալ-խորհրդատվական աշխատանքները	2 [2]		4 [2]		5	տեղեկատվական տեխնոլոգիա
7.	Սոցիալական մանկավարժի խորհրդատվական աշխատանքն օժիված երեխաների հետ:	Օժիված երեխան, նրա հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները: Տաղանդավոր և բացառիկ ընդունակություններով երեխաների տարբերակումը որպես խորհրդատվական աշխատանքի սկզբնական փուլ: Օժիված երեխայի ծնողների հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները:	2 [2]		4		5	թեստային աշխատանք

8.	Սոցիալ-խորհրդատվական աշխատանքն աուտիկ երեխաների հետ:	Աուտիկ երեխայի խոսքի ձևավորման առանձնահատկությունները: Աուտիկ երեխայի սոցիալական դժվարությունները և շփման առանձնահատկություններըՔ Աուտիկ երեխայի բնավորության և վարքի առանձնահատկություններըՔ Աուտիկ երեխայի հետաքրքրությունների առանձնահատկությունները և զգացողությունների /սենսորիկայի/ զարգացման առանձնահատկություններըՔ Աուտիզմով տառապող երեխաների կրթության կազակերպումը: Կառուցվածքային ուսուցումը որպես աուտիկ երեխաների ուսուցման ձև:	4		6 [2]			խաչաձև հարցուպատասխանի, «Ֆայթ» հարցադրումների, դեբատի, գաղափարագրման, կոլեկտիվի գնահատման, ինքնագնահատման միջոցով
9.	Սոցիալական մանկավարժության խորհրդատվության իրականացումն ընտանիքում:	Ընտանիքի տիպերը: Հիվանդ երեխա ունեցող ընտանիքի հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները: Անչափահաս երեխա ունեցող ընտանիքի հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները: Հարբեցող ընտանքի հետ տարվող սոցիալ-խորհրդատվական աշխատանքները: Սոցիալական օգնության խառը տիպի կենտրոնները:	2		4		5	
	ԸՆԴԱՄԵՆԸ		22 [8]		34 [6]			

11. Դասընթացի ռեսուրսային ապահովում (ռեսուրսների քարտ)

11.1 Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

(ներառյալ սկզբնաղբյուրները էլեկտրոնային կրիչներով, տեղեկատվական ռեսուրսների բազաները)

№	Անվանումը/հեղինակ	Հրատարակման տարի	օրինակներ
---	-------------------	------------------	-----------

			քանակը
Պարտադիր գրականություն			
1.	Г. Ю. Титова, Методика и технология работы социального педагога в общеобразовательном учреждении	Томск, 2009	
2	Галагузов М. А., Мардахаев Л. В, Методика и технология работы социального педагога	Москва, 2007	
3.	Селевко Г. К., Педагогические технологии на основе активизации, интенсификации и эффективного управления УВП	Москва, 2005	
4.	И.А. Липский, Опубликовано с сокращением и редакторской правкой в журнале Педагогика. - - № 9.	Москва, 2004	

11.2. Դասընթացի նյութատեխնիկական ապահովման քարտ

№	Անվանում	քանակ	Օգտագործման ձևը
	լսարան N 4, 211		
1	SMART գրատախտակ, համակարգիչ		Դասախոսությունների նյութերի, գործնական պարապունքների ուսումնական և գիտական տեսաֆիլմերի ցուցադրում
2	Համացանց		Աշխատանք համակարգչի հետ՝ կրթական ռեսուրսների օգտագործմամբ

11.3 Դասընթացի ուսումնամեթոդական քարտ Դասախոսական դասընթացի ուսումնամեթոդական քարտ

N դաս-խու-ն	Թեմա	Անցկացման տեսակը և ձևը (ֆրոնտալ,բա նավեճային,հ նտերակտիվ և այլն)	Նպատակը, պահանջները	Դասախոսության ընթացքում ուսումնասիրվող հարցեր	Առաջադրանքներ ուսանողներին՝ դասախոսությանը պատրաստվ	Դասախոսության թեմային վերաբերող գրականություն և տեղեկատվական նյութեր

					<i>էլու համար</i>	
1.	Սոցիալական մանկավարժության և խորհրդատվության էությունը:	Ֆրոնտալ,բան ավեճային, ինտերակտիվ	ծանոթանալ խորհրդատվական և աշխատանքների ուղղություններին	Սոցիալական մանկավարժության և խորհրդատվություն ընտանիքին: Սոցիալական մանկավարժության և խորհրդատվություն զբաղվածություն ոլորտում: Մանկության սոցիալական պաշտպանություն Սոցիալական մանկավարժության և խորհրդատվություն հաշմանդամների հետ: Սոցիալական մանկավարժության և խորհրդատվություն ծերերի հետ: Սոցիալական դաստիարակություն:	վերհիշել սոցիալ-մանկավարժական գործունեության ուղղությունները	դասախոսական նյութեր, www.google.ru ,
